Արձանագրություն N 3

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133»ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28.07.2020թ.

Ժամը՝ 10:50

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Կատվալյան/ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. ԳրիգորյանՍ. Ասատրյան

Ա. Լոռեցյան,Ն. Գալստյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 24.07.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/77որոշումը կատարելու մասին

(Ս. Կատվալյան)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի 24.07.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/77որոշումը (այսուհետ՝ որոշում), համաձայն որի՝ ՀՀ բողոք քննող անձը պարտավորեցնում է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կատարել գնման ընթացակարգիփոփոխություն՝ հեռացնելով մարդատար ավտոմեքենայի «վիճակը իդեալական»պահանջը (հրապարակված 25.06.2020թ.),և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 30.06.2020 թվականին, ժամը 11:00-ին «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133»գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով և այլևս հնարավոր չէ www.armeps.am համակարգում կատարել հրավերի փոփոխություն, գնահատող հանձնաժողովը որոշեց.

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133»գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի /պայմանագիր չի կնքվում/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.2 Հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ ---------- Ս. Կատվալյան

Անդամներ՝ ---------- Մ. Գրիգորյան

---------- Ս. Ասատրյան

---------- Ա. Լոռեցյան

---------- Ն. Գալստյան

Համակարգող՝ ---------- Ս. Եղիազարյան